Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն 1.

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստի

2025թ. մայիսի 21

Նախագահում էր Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար՝ խորհրդի նախագահ Նարեկ Մկրտչյանը (այսուհետ՝ Խորհրդի նախագահ)

Մասնակցում էին՝
Խորհրդի անդամներ

Ալբերտ Նազարյան (փոխարինող)	«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն
Մարիամ Կարապետյան (փոխարինող)	«Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարարական կազմակերպություն
Գրիգորի Հովհաննիսյան	«Ակցիա Սովի Դեմ Հիմնադրամի» հայաստանյան մասնաճյուղ
Վարդուհի Դադունց	«Մարդը կարիքի մեջ» հասարակական հիմնադրամ
Արևիկ Հովհաննիսյան	«Հայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպություն
Ալլա Հարությունյան	«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն

Աննա Հովհաննիսյան (փոխարինող)	«Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպություն
Սևան Պետրոսյան (փոխարինող)	«Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» ԲԿ հայաստանյան մասնաճյուղ
Անահիտ Պապիկյան	Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ
Միրա Անտոնյան	Երեխաների պաշտպանության կենտրոն հիմնադրամ

Բացակայում էին՝

Հունան Հունանյան	«Սատար» հաշմանդամների հասարարական կազմակերպություն
Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպություն
Նելի Դոնոյան	««Աժդահակ» սոցիալ-բնապահպանական կենտրոն.
Տաթևիկ Կարապետյան	ֆիզիկական անձ
Մարուսյա Ճաղարյան	ֆիզիկական անձ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն) մասնակցում էին

Դավիթ Խաչատրյան	ԱՍՀ նախարարի տեղակալ
Տաթևիկ Ստեփանյան	ԱՍՀ նախարարի տեղակալ
Ռուբեն Սարգսյան	ԱՍՀ նախարարի տեղակալ
Սամվել Մուրադյան	ԱՍՀ նախարարության գլխավոր քարտուղար
Զարուհի Մանուչարյան	ԱՍՀ նախարարի մամուլի քարտուղար

Օրակարգի նախագծում ընդգրկված էր հետևյալ հարցը.

1. ՀՀ սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության 2022-2025 թթ. ծրագիր (այսուհետ՝ ծրագիր).

(Ներկայացնող՝ Խորհրդի նախագահ, զեկուցող՝ նախարարի տեղակալ Դ.Խաչատրյան)

Խորհրդի նախագահը ողջունեց Խորհրդի անդամներին և համառոտ ներկայացրեց քննարկվող թեման՝ ընդգծելով գործընկեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավվածության կարևորությունը՝ ծրագրերի իրականացման և սոցիալական պաշտպանության ոլորտում այլ բարեփոխումների գործում:

Այնուհետև նախագահողը խոսքը փոխանցեց աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանին: Նախարարի տեղակալը մանրամասն ներկայացրեց ՀՀ սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության 2022-2025 թթ. ծրագրի իրականացման ընթացքի, վերլուծության արդյունքների, մասնավորապես՝ ըստ բնակավայրերի իրականացված գործարքների ժամանակագրության, ըստ շահառու ընտանիքների ամուսինների գումարային տարիքի, ինչպես նաև շինարարական աշխատանքների ընթացքի, ծրագրի համար հատկացված ֆինանսական միջոցների և այլնի մասին:

Քննարկման ընթացքում մասնակիցների կողմից հարց ու պատասխանի ձևաչափով քննարկվեցին ծրագրի ընթացիկ, ինչպես նաև հետագա շարունակականությանը վերաբերող հարցեր: Մասնավորապես՝

- ծրագրին մասնակցության նոր չափանիշների սահմանմանը,
- ըստ այդ չափանիշների բնակարանային խնդիր ունեցող այլ թիրախային խմբերին ծրագրում ինտեգրելու հնարավորությանը,
- ծրագրի լայնամասշտաբ լուսաբանմանը:

Այնուհետև, մասնակիցների հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց առաջիկա օրերի ընթացքում ներկայացնել առաջարկություններ՝ ծրագրում հետագա փոփոխությունների շրջանակում դիտարկելու նպատակով:

Նշված համատեքստում Երեխաների պաշտպանության կենտրոն հիմնադրամի նախագահ Միրա Անտոնյանն առաջարկեց այլընտրանքային կարգով Գեղարքունիքի, Սյունիքի և Կոտայքի մարզերում մագիստրոսական աշխատանքների շրջանակում իրականացնել շահառուների կարիքների որակական գնահատում և վերլուծություն՝ ծրագրի արդյունավետության և շահառու ընտանիքների կողմից ընտրված բնակավայրերում ապրելու համար խթանիչ գործոնների վերաբերյալ առավել հստակ պատկեր ունենալու նպատակով, որն էլ հավանության արժանացավ Խորհրդի նախագահի կողմից:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎԵՑ.

Նախարարի մամուլի քարտուղար Զ.Մանուչարյանին՝ կազմակերպել Նախարարության կողմից մշակված, Կառավարության կողմից հաստատված նախագծերի, ինչպես նաև սոցիալական ոլորտին վերաբերող լուսաբանումների (հարցազրույցները) շաբաթական պարբերականությամբ էլեկտրոնային փոստի միջոցով Խորհրդի անդամներին իրազեկման գործընթացը:

ԺԱՄԿԵՏ՝ 15 օր

X _____

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ն.ՄԿՐՏՉՅԱՆ**

Արձանագրությունը կազմեց՝ Հ. Ներսիսյանը